1552. Ի թվին Հայոց ՌԱ. Յունվարի 14. Տէր Ստեփանոս Էջմիածնու կաթողիկոսն եկն ի Ֆռանգիստանու ի Լով քաղաքն, և անդ վաղճանեցաւ։

1552. Թվ. Հայոց ՌԱ. մարտի 10, օրն հինգշաբթի. Կամենից քաղաքն մեծ կրակ ընկաւ, և 16 ալբաւուտի (կրպակ) երեցաւ, և եօթն տուն Հայու։

1554. Թվ. ՌԴ. Խոնդիքարն Սուլէյմանն զՄուստաֆան զիւր մեծ որդին էսպան։

1556. Թվ. ՌԵ. Լուսինն և աստղն ընդ յիրար փակեցան, մայիսի 12, օրն երկուշաբթի. զոր տեսեալ բազմաց՝ և Աստուծոյ փառս տուեալ հիացմամբ մեծաւ։

1560. Հայոց թվ. ՌԹ. Ի Կամենից քաղաքս՝ զժամացոյցն որ կոչի սահաթ, նորեցին և մեծագոյն շինեցին։

1560. Հայոց թվ. ՌԹ. Հոկտեմբեր 15. Ոմն Տեսբոթ անուն յայտնեցաւ այսմ ժամանակիս. որ և զինքն Օլախի երկրի վերայ պարոն անուանեց. և էր ինքն Սըրպ, այսինքն Արնաւութ. յետոյ գնաց ի քրիստոնէից կայսրն մօտ Ֆէրտինանտըը (Ֆերտինանտոս Ա.), և կայսրն ետ նմա ոչ բազում ինչ զօրս, և զամենայն կուլոյ անօթք քաջ պիտանիք, և թէ հրեղէն և թէ բոցեղէն, և թէ սրեղէն. և առաքեաց զինքն՝ որ գայր տիրէր ի վերայ Օլախաց երկրին. վասն զի Օլախի երկրին մարդիքն խիստ մեծ նեղութեան մէջ էին, և բազումք չարչարանս կրէին ի իւրեանց պիղծ պարոնէն, որ կոչէր Բէդրա Օլե-

» քահանայ ոմն, որ զերկու աչսն եհան, և զերկու ձեռսն և զոտսն և զլեզուս և զհոտոտելիս » և զշրթունսն՝ նման Յակովկայ արար։ Եւ Պալքոյ անուն ումեմն զճակատն քերթեցին. և » այլ պէսպէս կատամաշ սպանին և զբազումս։ Դահիճք նոցա քահանայք էին Ուլախաց ազգէ, » և գլխաւորք սոցա չեպիսկոպոսն իւրեանց, հրամանաւ պիղծ թագաւորին Ստեփանի. յորմէ » էառ »···· (պակասէ)։

Յառաջ քան զԵրեմիա՝ ժամանակակից և ակնատես քերդողն Մինաս Թոխատցի՝ երկար ոտանաւոր Պատմութիւն մի գրած է այս դէպքաւորիս, որ ծանօթ էր մեզ կէս դար այլ առաջ, բայց իբրու նորայայտ ինչ հրատարակեցաւ թէ՛ բնագիրն ի Հանդէս Ամսօրեայ (Բ, 39. 62, և Թ, 97. 131), հանդերձ կարեւոր տեղեկութեամբք, և թէ թարգմանութիւնն ոտաններէն։ Եթէ ասոր ցեղէն սերեալ չէ, զարմանալի է դար մի վերջը ուրիշ Մինաս Թոխատցի Վարդապետի մի երեւնալն, և նոյն այն կողմերում՝ ուր ողբերգական դէպքն եղած է։ Յետոյս ծնողքն այլ յիշուին, Զէլիֆտար Ալէքսան և Խասխաթուն. նախ յամին 1641 այս Մինասայ համար գիրք մի գրուած է ի Տփղիս. յետ 36 տարիներու (1676) ինքն գրէ. « Մինաս՝ բանի սպասաւոր, երկրին Պուղտանայ առաջնորդ, որ զգիրքս (Մաշտոց) գտի Եաշ քաղաքն, կտրատեալ ի յայլազգեաց և առի յիս, և զպակասն գրեցի ձեռօք իմովք », և այլն։ Տասն տարի վերջը 1687 ի Լով՝ խոստագիր կու տայ մէկու մի, որ անոր ի Պոդտան մեռած եղբօր մէկ գիրքը զրկէ իրեն. ուրիշ մէկ գիրքն խաւրեր էր ի Թոխատ։ Մեր այս ժամանակագրութեան կարգն և հեղինակին խօսքն, թէ առաջուց գրած էր Շտեֆանին հալածանքը, պատշաճ երեւցուցին, որ առաջին Մինասայ քերդուածն անցընեմք այս տեղ ի կարգի ծանօթութեան դրծոյս, որ գուցէ և ամենուն ծանօթ չըլլալով՝ կըրնայ հաճոյանալ, թէ և ծանօթութեան նիւթն՝ միչտ անհաճոյ։